ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ջերմուկ **24/դեկտեմբերի/2024 թ.**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԸ ՉԿԱՅԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

2024 թվականի դեկտեմբերի 24-ին ժամը 15:00-ին հրավիրված համայնքի ավագանու հերթական նիստին մասնակցելու անհնարինության, նիստին բացակա լինելու և բացակայության պատճառի մասին համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին նախապես տեղյակ էին պահել ավագանու 9 անդամներ՝ Վարդան Սարգսյանը, Լուսիկ Սարգսյանը, Աննա Վարդազարյանը, Գոհար Խաչատրյանը, Մխիթար Համբարձումյանը, Մխիթար Այվազյանը, Մարինե Մկրտչյանը, Ժիրայր Բաբայանը, Վարուժան Վահանյանը՝ ղեկավարվելով ավագանու Կանոնակարգի 40-րդ կետի «*Համայնքի ավագանու նիստերից անհարգելի բացակայելու դեպքում ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման կարգը*» հատվածի կարգավորումներով:

Աշխատակազմի քարտուղար Գոհար Թադևոսյանը զեկուցեց, որ նիստի իրավազորությունը չի ապահովվում, օրենքով սահմանված թվի կեսից ավելին բացակա է լինելու, իսկ ավագանու մնացած անդամների ներկայությամբ քվորում չի լինելու, ըստ այդմ նիստը չի կայանալու:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասին և Ջերմուկ համայնքի ավագանու Կանոնակարգի 97-րդ կետի 2-րդ պարբերության՝ Ջերմուկ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի հերթական նիստը համարվում է չկայացած:

Համայնքի ավագանու արտահերթ նիստ անելու նպատակով ավագանու անդամներին համայնքապետարան հրավիրել դեկտեմբերի 25-ին:

Ջերմուկ համայնքի ղեկավար՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ